ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1590 30.09.2015թ

ՀՀ ոստիկանության պետ,
գեներալ-լեյտենանտ
պարոն՝ Վ. Գասպարյանին

Հարգելի պարոն Գասպարյան,

Դիտորդական խումբը սույն թվականի սեպտեմբեր ամսին այցելություն էր կատարել ՀՀ ոստիկանության Արագածոտնի ՄՎ Աշտարակի ՀՊՎ և արձանագրվել էին մի շարք թերություններ և խախտումներ:

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՅՈՒՐ
№ 4670
07.10 2015թ.

Թերություններ՝

1. ՀՊՎ-ի նախասրահում լուսավորությունը վատ էր, որովհետև այրված էին շիկացման լամպերից երկուսը:
2. Տեսակցության սենյակում ընդհանրապես արհեստական լուսավորություն չկար:
3. Անտեսելով բուժսենյակի սանիտարահիգիենիկ պայմանները՝ բուժսենյակը **օգտագործվում էր նաև որպես պահեստ:**
4. Ճաշասենյակում *սպասքը լցված էր* բոլորը իրար վրա և գտնվում էր փոշոտ վիճակում:

/ կից ներկայացվում է լուսանկարներ 1,2,3,4 /

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՅՈՒՐ
6707
06 10 2015թ.

Խախտումներ՝

1. Արթուր Ալեքսանդրի Մեյրոյանը ՀՀ ոստիկանության Արագածոտնի ՄՎ Աշտարակի ՀՊՎ ընդունվել է 07.05.2015թ-ին ժամը 11.40-ին, ՀՀ ՔԿ Արագածոտնի ՄՔՎ 04.05.2015թ-ի գրության համաձայն և նույն օրը՝ ժամը 16.45-ին տեղափոխվել է ՀՀ ԱՆ ՔԿ հիմնարկ: Դիտորդական խմբի այն հարցին, թե գրությունով կալանավորին ՀՊՎ ընդունելը

ՀՀ ք.Երևան 0009,Սարմենի 60 Հեռ./ֆաքս: (+374 10) 52 81 87
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

օրենսդրության խախտում է, հերթապահ մասի պետը մեկնաբանեց, որ տվյալ անձը կալանավոր չէ, այլ ձերբակալված է, որին գրությամբ ընդունելու իրավունք ունեն: Նշենք, որ Դիտորդական խմբի ուսումնասիրությունների արդյունքում պարզվեց, որ Ա. Մեյրոյանը ձերբակալվել է 13.01.2015թ-ին ժամը 12.10 ՀՀ ոստիկանության Արագածոտնի ՄՎ Աշտարակի բաժնի ՔՀԲ օ/լ Լ. Կարապետյանի կողմից և 16.01.2015թ-ին ժամը 10.10-ին տեղափոխվել է ՀՀ ԱՆ ՔԿՀ:

Միանշանակ կարող ենք պնդել, որ նշված անձը կալանավորվածի կարգավիճակով ընդունվել է ՁՊՎ՝ հիմք ընդունելով միայն քննիչի գրությունը: Անհասկանալի է, տվյալ ՁՊՎ-ի հերթապահ մասի պետի աշխատելաոճը, ով դեռ մինչ օրս չգիտի, որ, թե ձերբակալված և թե՛ կալանավորված անձիք քննիչի գրության հիման վրա չեն ընդունվում և պահվում ՁՊՎ-ում: */ կից ներկայացվում է լուսանկար 5,6/*

Այսպիսով՝ խնդրում ենք ուսումնասիրել ներկայացրածը և տալ մեկնաբանություն:

Հարգանքներով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝ Հ. Սահակյան

ՀՀ ք.Երևան 0009,Սարմենի 60 Հեռ./ֆաքս: (+374 10) 52 81 87
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

375025, ք. Երևան, Նալբանդյան 130 հեռ. 59-65-94

N 2/2-1-3666 <<28>> 10 2015թ.

Ձեր 30.09.2015թ. թիվ 2621/1590 գր.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալվածներին պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի նախագահ տիկին Հասմիկ Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան

Հայտնվում է, որ դիտորդների խմբի կողմից 2015թ. սեպտեմբեր ամսին ՀՀ ոստիկանության Արագածոտնի մարզային վարչության Աշտարակի բաժնի ձերբակալվածներին պահելու վայր կատարած այցելության ընթացքում արձանագրված թերությունները և խախտումներն ուսումնասիրվել են ՀՀ ոստիկանության շտաբում և Արագածոտնի մարզային վարչությունում:

ՀՀ ոստիկանության Արագածոտնի մարզային վարչության կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն ներկայացվում են ներքոշարադրյալ մեկնաբանությունները:

Թերություններ.

Հայտնվում է, որ դիտորդների խմբի կողմից ՀՀ ոստիկանության Աշտարակի բաժնի ՁՊՎ կատարած այցելության ընթացքում արձանագրված թերություններն արդեն իսկ վերացվել են:

Խախտումներ.

Ա.Մեյրոյանը որպես կալանավոր ՀՀ ոստիկանության Աշտարակի բաժնի ՁՊՎ է ընդունվել 07.05.2015թ. ժանը 11.40-ին, ՀՀ ՔԿ Արագածոտնի մարզային քննչական վարչության քննիչ Գ. Առաքելյանի 04.05.2015թ-ի որոշման հիման վրա, որը կից գրությամբ ուղարկվել է ոստիկանության Աշտարակի բաժին, որոնց պատճենները հասցեագրվել են նաև ոստիկանության Արագածոտնի մարզային վարչության և ՀՀ ԱՆ <<Նուբարաշեն>> ՔԿՀ պետերին:

ՈՒսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ քննիչ Գ. Առաքելյանի որոշման մեջ նշվել է մեղադրյալ Ա.Մեյրոյանին ՀՀ ԱՆ <<Նուբարաշեն>> ՔԿՀ-ից Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան տեղափոխելու մասին, որի կատարումը հանձնարարվել է Արագածոտնի մարզային վարչությանը, իսկ կից գրության մեջ նշվել է << անհրաժեշտության դեպքում մեղադրյալ Ա. Մեյրոյանին պահել ոստիկանության Աշտարակի բաժնի ՁՊՎ-ում>>, ինչն էլ թյուրիմաձության տեղիք է տվել:

ՀՀ ոստիկանության Աշտարակի բաժնի հերթապահ մասի պետը խիստ նախազգուշացվել է ՀՀ կառավարության 05.06.2008թ. թիվ 574-Ն որոշման 7-րդ կետի պահանջները խախտելու համար և քանի որ ունեցել է գործող կարգապահական տույժ բավարարվել են խիստ նախազգուշացումով:

Հայտնվում է նաև, որ ոստիկանության կողմից տարածքային ստորաբաժանումներ համապատասխան գրությամբ հանձնարարական է տրվել ձերբակալված և կալանավորված անձանց ՁՊՎ ընդունելու, պահելու, ազատելու գործընթացը իրականացնել պատշաճ կերպով ղեկավարվելով հիշյալ գործառույթները կանոնակարգող իրավական նորմերի պահանջներով:

ՀՀ ոստիկանության շտաբ